

## ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑԻՑ

Կովկասնեան Ակարիների ցուցահանդէսը Թիգիխուռմ:—Մեր հասարակուրեան անտարեռուրիւնը դեպի զեղարուեսի այդ ճիւղը:—Այդ երեւոյրի մի ժամանակակիցը:—Կովկասնեան ազգերից որոնի են տալիս Ակարիներ:—Պատմի պատմառերը:—Կովկասնեան ազգերից որոնի են տալիս Ակարիներ:

Նախորդ տարիների պէս այս տարի էլ Թիֆլիսի Փառքի Տաճարում բացուցեց Կովկասնեան նկարիչների պատկերահանդէսը: Զի կարելի չնկատել, որ մեր հասարակութիւնն առհասարակ առանձին հետաքրքրութիւն չի ցոյց տալիս դէպի գեղարուեստի այդ ճիւղը: Աշխատենք իմանալ այդ երևոյթի պատճառները:

Գեղեցկի ըմբռնուամը կամ էստետիկական դգացմունքն ևս ենթարկում է աստիճանական զարգացման օրէնքին. նա ժառանգականութեամբ սերնդից սերունդ՝ է անցնում: Իտալացու հոգին տարիների ընթացքում ազդուել է գեղարուեստական տպաւորութիւններից, նա աչքը բաց է անում և տեսնում իր փառաւոր անստիկ անցեալի գլուխ գործոցներ, վերածնութեան շրջանի հոյակապ ստեղծագործութիւններ, հայրենի ճոխ թանգարաններում, վեհ տաճարներում Ապոլոնի և Վեներայի անդրիներն են խօսում նրա հետ, Լէոնարդօ-դա-Վինչիի, Ռաֆայէլի, Միքել-Անջելոի, Տիցիանի հանճարն է հմայում նրան: Ոչ միայն ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը, նկարչութիւնը, այլև իտալացու ժողովրդական պարը, երգը էստետիկական զարգացման ամենաբարձր արտայայտութիւններ են: Իսկ մեզանում... բաւական է լսել զուռնայի ձայնը, տեսնել մեր «նազանին», ժողովրդի նիստ ու կացը, տաճարներում եղած քանդակագործներն ու նկարները և վերջապէս գեղարուեստային արդիւնագործութիւնները—համոզուելու համար, որ մեր ժողովրդի էստետիկական զարգացումը դեռ շատ հետու չէ գնացել վայրենիների ճաշակից: Այդպիսով մինչդեռ եւրոպական արդի գեղարուեստը համապատասխան է այդ ազգերի ամբողջ կուլտուրական զարգացման, դրանց գեղեցկութեան գաղափարի

արտայայտութիւնն է, դրանց հոգուն հարազատ յոյզերի արգասիք, նա մեղանում կեանքի ծնունդ չէ, այլ դրսից եկած մի օտարամուծութիւն, էկզոտիկ բոյս, որի աճման համար հարկաւոր են արուեստական պայմաններ:

Մասնաւորելով մեր խօսքը նկարչութեան վրայ՝ պէտք է տեսնենք, որ մեր կովկասեան նկարիչները այդ օտարամուտ արուեստի առաջին սերունդն են. նրանք երկրի մէջ, ժողովրդի անցեալում նախորդներ չունեն, նրանց ստեղծագործութիւնը մի նոր աստիճան, մի առաջադիմական քայլ չէ արդէն եղածների մէջ. նոր և նորի մէջ ահագին վիճ կայ, հինը և նորը տարբեր կուլտուրաների արդիւնքներ են:

Երկրի անցեալի հետ, ժողովրդի էստետիկական զարգացման հետ չկապուելով՝ եւրոպական նկարչութիւնը մեղանում գոյութիւն ունի, ինչպէս և քաղաքակլրթութեան բազմաթիւ բարիքներ, լոկ մի փոքրիկ խափի համար: Հէնց այդ փոքրիկ խափի համար են աշխատում մեր նկարիչները: Այդ ցուցահանդէսները պատկերների շուկաներ են, ուր մեր ունենոր դասակարգը կարող է ձեռք բերել թանկագին կանկարասիքների լրացուցիչ զարդեր, կովկասեան տեսարանների և տիպերի իւղանկարներ... իսկ ժողովուրդը, մասսան գեղարուեստով հետաքրքրելու համար պէտք է նախ նրա գոյութեան շատ պայմաններ փոխուեն, պէտք է նրա կրթութիւնը և դաստիարակութիւնը գուրս դայ այն ողբալի վիճակից, որի մէջ է գտնուում նա այժմ:

Չունենալով երկրի անցեալի մէջ նախորդներ և գոյութիւն ունեցող իրականութեան հետ սերտ կապ, մեր նկարիչները գեռաւ և անկարող էլ են գեղարուեստի այդ ճիւղի մէջ ինքնուրոյն ոճ, եւրոպականից տարրեր ուղղութիւն զարգացնել: Անշուշտ, կովկասի պէյզամներ, ժանր ու տիպեր են նկարուած այդ պատկերների վրայ, սակայն նկարելու եղանակի, գոյների ընտրութեան, առհասարակ տեխնիկայի մէջ դուք տեսնում էք սորկական հետեւողութիւն վարպետներին: Կովկասեան նկարիչների ստեղծագործութիւնները նոր գաղափար, նոր տրամադրութիւններ չեն մոցնում գեղարուեստի այդ ճիւղի մէջ, չնայած որ երկիրը և ժողովուրդը եւրոպականից շատ տարբեր առանձնայատկութիւններ ունեն: Դուք չէք նշմարում այդ նկարների մէջ այնպիսի ինքնուրոյն կողմեր, որ կարելի լինէք ասել, թէ ահա կովկասեան ապագայ շլոլայի նկարիչները: Իտալական վարպետների մօտ աշակերտելը արգելք չեղաւ, որ ֆլամանդական և հոլլանդական ինքնուրոյն շկոլաներ ստեղծուեն. հոլլանդականից աղդուելը չխանգարեց, որ նկարչութիւնը Ան-

գլխայում ստանայ անզիլիական ոգու դրոշը. մի Հոգարթ, մի Գենսբորօ, մի Բայնոլդս լոկ հետևողներ, ընդօրինակողներ չէին, այլ նոր շկոլայի ստեղծիչներ... Այդպէս ահա, կուլտուրական ընդհանուր պայմանների մէջ պէտք է գտնել թէ հասարակութեան անտարերութիւնը և թէ նկարիչների անինքնուրոյնութիւնը:

Թէ կուլտուրական ընդհանուր մակերևոյթը որքան մեծ դեր է կատարում էստետիկական յոյզերի զարգացման գործում, այդ ապացուցւում է հէնց ներկաւ ցուցահանդիսի մի այլ կողմով ևս: Ի՞նչու մենք տեսնում ենք հայ և վրացի նկարիչներ, իսկ թուրք, քուրդ, լէզգի և ոչ մի անուն: Ոքովհետեւ հայը, վրացին իրանց անցեալով, իրանց կուլտուրայով այսպէս թէ այնպէս այնուամենայնիւ կապուած են եղել հռոմ-քիւղանդական կամ ուստական ազդեցութիւնների շնորհիւ եւրոպական քաղաքակրթութեան հետ, իսկ թուրքը, լեզգին՝ ոչ:

Ներկայ ցուցահանդիսում դրուած էին հետևեալ հայ նկարիչների ստեղծագործութիւնները. Արտազեանի, Բաշինջաղեանի, Թաղէսսեանի, Թերլէմէզեանի, Միքայէլեանի, Յակոբեանի, Շամշինեանի և Փիրաղեանի: Վրացիներից մասնակցում էին երեք հոգի: Շատ աւելի էին ուսւ և եւրոպական ազգանուններով նըկարիչներ:

Ով մի անգամ տեսել է այդ բոլոր նկարիչների ստեղծագործութիւնները, նրա համար գֆուար չէ առանց ցուցակի էլ որոշել՝ որ պատկերը որի վրձինին է յատուկ, այնքան բնորոշ են իւրաքանչիւրի սիրած կոլորիտը, սիւժէն: Այդպէս օրինակ՝ իսկոյն ջոկւում են Բաշինջաղեանի, Զանկովսկու և Զոմմերի նկարները:

Բաշինջաղեանի նկարների մասին մի անգամ առիթ ենք ունեցել աւելի մանրամասն խօսելու (*«Մուլճ»* 1902 թ. №4). Կրկնութիւններ չանելու համար ասենք, որ նա շարունակում է նկարել իր պէյզաժները, յաճախ տալով իր հին ստեղծագործութիւնները ընդօրինակումներ (*Արարատ, Սևանայ լիճ, լոյսի զանազան բեկրեկումները* Ջրի երեսին, ծառերի կատարներին, ծառուղիներում, խաւար հեռաւորութեան մէջ ևայլն): Կրկնութիւնները երբեմն չունեն առաջին ոգեսրութեան հմայքը, և հէնց այդ պատճառով երբեմն նկարը անգոյն է դուրս գալիս (տես օրինակի համար № 13—շտիլ Գոկչայի լճի վրայ): Նոր են և տպատրիչ նրա «*Ճարւայ. Հորն եղանակներ»* պատկերները, որոնք լաւ են արտայայտում բնութեան այդ պարբերական փոփոխութիւնները:

Ցակորեանը տեղային ժամը և տիպեր է սիրում նկարել-

աշողուած են նրա «Երկրագործ», «Դուքան» և «Հովիւ» պատ-  
կերները:

Թէրլէմէզեանը կարծեմ առաջին անգամ է ի ցոյց դնում  
իր պատկերները. նրա «Արարատը» աւելի բէալ է, քան արդ-  
գուրս է գալիս Բաշինջաղեանի վրձինի տակից:

Զոմմերը առանձին ուսումնասիրել է զրխզների և թուրք-  
մէսների կեանքը. նրա «Թարաւան», «Թուփարեան դպրոց»,  
«Նամազ», «Փողոցը Սամարդանդում» գեղեցիկ ժանրային պատ-  
կերներ են. Տեխնիկայի կողմից սքանչելի է Պաեւսկու նկարած  
մի պատկերը (№ 59).

Ինչպէս վայել է ժամանակակից ցուցահանդիսին—մոռա-  
ցուած չէ և գեկադանսը... Ն. Սկլիֆոսովսկին միակ ներկայա-  
ցուցիչն է այդ մոդերն ուղղութեան, և պէտք է խոստովանել,  
ի ցոյց դրուած նմուշներով շատ աննպաստ կարծիք պէտք է  
կազմէ այցելուն գեղարուեստի այդ նորագոյն շկոլայի մասին...

I. U.